ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-790-04.03.2024-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	***Կառավարություն***	Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մաս	Որպես սոցիալական լրացուցիչ երաշխիք՝ առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր հոդվածով, որը լրացում է նախատեսում Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասում՝ նախատեսելով նոր 9-րդ կետ, որի համաձայն՝ բռնագանձում չի կարող տարածվել այն գույքի վրա, որը Կառավարության որոշման հիման վրա տրամադրվում է որպես աջակցություն կամ փոխհատուցում, եթե Կառավարության այդ որոշմամբ սահմանված է, որ տվյալ գույքը բռնագանձման ենթակա չէ:	Ընդունվել է:	Ընդունվել է :
2.	***Կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծով ի թիվս այլնի առաջարկվել է սահմանել դրույթներ, որոնց համաձայն՝ պարտապանի աշխատավարձի վրա բռնագանձում տարածելուց հետո պարտապանին հասանելիք մնացորդը	Ընդունվել է:	Ընդունվել է :

			պետք է պակաս չլինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից: Նշված խրախուսական նորմը Նախագծով նախատեսվել է առանց բացառության բոլոր հիմքերով պարտավորությունների համար, սակայն, լրացուցիչ քննարկումների արդյունքում նպատակահարմար ենք գտնում սույն խրախուսական նորմի մասով բացառություն սահմանել ալիմենտի, առողջությանը, կերակրողի մահվամբ պատճառված վնասը, ինչպես նաև հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու պարտավորությունների կատարման վարույթներով՝ ելնելով այդպիսի պարտավորությունների հատուկ բնույթից: Ուստի, առաջարկվում է Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը հանել:		
3.	***Կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետում «ՀՀ կառավարություն» բառերը փոխարինել «Կառավարություն» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է :
4.	***Կառավարություն***	Օրենքի 62-րդ հոդված	Պայմանավորված ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ հաստատված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025	Ընդունվել է:	Ընդունվել է :

			թվականների գործողությունների ծրագրի կատարումն ապահովելու նպատակով լիազորող համապատասխան նորմի սահմանման անհրաժեշտությամբ՝ առաջարկվում է Նախագիծը լրացնել նոր հոդվածով՝ սահմանելով, որ Օրենքի 62-րդ հոդվածը լրացվում է հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով. «Երեխայի տեսակցության և երեխային պահանջատիրոջ խնամքին հանձնելու պահանջների հարկադիր կատարման ընթացակարգը սահմանվում է Արդարադատության նախարարի նորմատիվ իրավական ակտով»: Միևնույն ժամանակ, Նախագծի անցումային դրույթներում սահմանելով, որ նշված նորմատիվ իրավական ակտն ընդունվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:		